



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

05 սեպտեմբեր, 2014թ.

ք. Երևան

Հակակոռուպցիոն ուսուցում Սյունիքի և Վայոց ձորի մարզերի ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար

2014 թվականի սեպտեմբերի 3-ից 5-ը Կապանում տեղի ունեցավ եռօրյա հակակոռուպցիոն ուսուցում Սյունիքի և Վայոց ձորի մարզերի ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար:

«Օրագրի շրջանակներում թվով 10-ը հակակոռուպցիոն դասընթաց է նախատեսված եղել Երևանում և ՀՀ մարզերում, որոնցից 5-ը տեղի է ունեցել Երևանում. սա թվով 10-րդն է», - ասաց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի գործադիր տնօրեն, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի համակարգող Արտակ Սարիբեկյանը:

Առաջիկայում հանրությանը կներկայացվի Հայաստանի 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության վերջնական նախագիծը: Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգով նախատեսվել է Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգումն ու դրանց կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդին, դրա կազմում ընդամենը 2 տեղ հատկացնելով ՔՀԿ-ների ներկայացուցիչներին: Դասընթացին մասնակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով հասարակության շահերը ներկայացնելու համար 2 ՀԿ-ի ներկայացուցիչը քիչ է: «Կարծում եմ, որ միանշանակ քիչ է և աշխատանքները կազմակերպելու համար հասարակական սեկտորի մասնակցությունը պետք է ավելի ընդգրկուն լինի», - նշեց Իրավական հասարակություն ՀԿ-ի ներկայացուցիչ Էդգար Հովհաննիսյանը: Ուսուցման մասնակից, «Շնորհիմ իրավական կամայականություն» ՀԿ-ի ներկայացուցիչ Հրայր Խաչատրյանի կարծիքով. «ՀԿ-ները պետք է ավելի շատ ներկայացված լինեն և ընդհանրապես, եթե Կառավարությունը չմասնակցի ավելի ճիշտ կլինի, քանի որ եթե մի բանը պետք է հսկի մի մարդ, որն ինքն է կատարում, ինքը չի կարող իրեն հսկել»:

Ո՞րն է ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, որո՞նք են տեղեկատվություն ստանալու մեխանիզմներն ու աղբյուրները, ինչպե՞ս իրականացնել լրագրողական հետաքննություններ: Սյս և այլ հարցերը ուսուցման եռօրյա ծրագրի օրակարգում են եղել:

Օրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Օրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Սյս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Օրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Բնֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Օրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Օրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Բնֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Օրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00: **հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.ayla.am>: Կատարող՝ Նարինե Կարապետյան, էլ.փոստ՝ pr@ayla.am:**



Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճ: +37410 58 02 99

Բնֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռապատճ: +37410 56 03 60

Օրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճ: +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային գանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: